

ԱՆՆԱ ԱՐԱՋՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ  
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

XIX դ. սկիզբը լեզվաբանության պատմության մեջ նշանավորվում է պատմահամեմատական լեզվաբանության հիմնադրմամբ, որն իր անունը ստացել է պատմահամեմատական մեթոդից:

Պատմահամեմատական լեզվաբանությունը ապացուցեց, որ հնդեվրոպական լեզվաընտանիքը աշխարհի բազմաթիվ լեզուների ընտանիքներից մեկն է և բաժանված է 11 ճյուղի /արիական, թխարական, հայկական, հաթյան, թրակո-փռյուզական, հունական, լյուրիկյան, իտալական, բալթիկ-սլավոնական, գերմանական և կելտական/:

Հայերենի՝ իբրև աշխարհի ամենահին լեզուներից մեկի ծագման և ցեղակցության հարցերը դառնում են ժամանակի նշանավոր լեզվաբանների ուսումնասիրության առարկան:

1816թ. պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկը՝ Ֆրանց Բոպպը, հրատարակում է «Հնդեվրոպական լեզուների հոլովման դրությունը» աշխատությունը, ուր նրա ուսումնասիրած հնդեվրոպական լեզուների շարքում դեռ չկային հայերենը, լիտվերենը, սլավոներենը, կելտերենը: 1833թ. լույս ընծայած «Համեմատական քերականության» մեջ Բոպպը հաստատում է, որ սանսկրիտը, զենդերենը, հունարենը, լատիներենը, գոթերենը, սլավոներենը ցեղակից լեզուներ են և պատկանում են նույն ընտանիքին: Նրան համակարծիք էին Ռասկը, Գրիմը, Հունթրիտը և ուրիշներ: Աշխատության II հրատարակության մեջ /1857/ Բոպպը անդրադառնում է նաև հայերենին՝ դնելով իրանական լեզուների մեջ՝ զենդից հետո:

Հայերենի համեմատական ուսումնասիրությունը մեծապես կապված է գերմանացի հայագետներ Հ. Պետերմանի և Ֆ. Վինդիշմանի անունների հետ:

1836թ. Վինդիչմանը գրում է «Հայերենի տեղը արիական լեզուների մեջ» /հրատարակում է 10 տարի հետո/, իսկ 1837-ին Պետերմանը հրատարակում է «Հայերեն լեզվի քերականությունը», որով հայերենը դառնում է քննության առարկա:

Այսպիսով, հայոց լեզուն ճանաչվում է իբրև հնդեվրոպական լեզու: Պետերմանը և Վինդիչմանը զալիս են այն եզրակացության, որ հայերենը հնդեվր. լեզվաընտանիքի իրանյան ճյուղին է պատկանում, իրանական բարբառ է:

Ինչպես գրում է ակադ. է. Աղայանը. «Պետերմանն ու Վինդիչմանը ... իրենց ուսումնասիրություններով բացահայտեցին այն մերձավոր մանություններն ու հատկանշական կողմերը, որ կան հայերենի և հնդիրանական լեզուների միջև. ճիշտ է, նրանք դեռևս չկարողացան որոշել հայերենի տեղն այդ լեզուների շարքում, սակայն այն բանը միայն, որ նրանք հայերենը հաստատապես մտցրին հնդեվր. լեզուների շարքը, թույլ է տալիս նրանց հայագիտության պատմության մեջ համեմատական լեզվաբանության հիմնադիրներ կոչելու»<sup>1</sup>:

Նույն տեսակետն են պաշտպանում Գոշեն, Մյուլլերը, Լագարդը:

Հայագիտության մեջ նոր դպրոցի հիմնադրումը կապված է գերմանացի ականավոր հայագետ Հայնրիխ Հյուբշմանի հետ:

1875թ. հրատարակվում է նրա հռչակավոր հոդվածը՝ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների մեջ», որն ունեցավ դարակազմիկ նշանակություն: Իր ուսումնասիրություններով մանրակրկիտ քննելով հայերենի հնչյունաբանությունն ու բառապաշարը, գատելով բնիկ տարրերը օտարամուծություններից՝ Հյուբշմանը ճշտեց հայերենի առանձնահատկությունները՝ սահմանելով նրա զարգացման հատուկ օրենքները:

Հայտնի էր, որ սանսկրիտի և պարսկերենի b, d, g հնչյունների դիմաց հայերենը ներկայացնում է ա. տ. կ կամ էլ ը. ը. զ: Օրինակ՝ սանսկրիտի *gacan* = պրսկ. *dah* «տասն» բառում d-ը դարձել է տ: Բայց նույն արմատից ունենք դահեկան, դահադրամ /dahdiræm/, որոնց մեջ d-ին համապատասխանում է ը:

Հնդեվրոպական p-ն հայերենում բառասկզբում դառնում է ք, լ, երբեմն՝ պ, փ: Օրինակ՝ սանսկրիտի *pad*, պրս. *pay* «ուտք» արմատի դիմաց ունենք հետ

/ք/ և, միևնույն ժամանակ, նույն արմատից գոյություն ունի փայիկ /«հետիոտն» սուրհանդակ/ paik:

Նախալեզվյան թ, օ ծայնավորների դիմաց հայերենը ունենում է ք, օ կամ ք, ինչպես կով և գավազան /gauzan/, նոր և նավասարդ /navasarժa /:

Նմանատիպ դեպքերը քննելով՝ Հյուբշմանը եկավ այն եզրահանգմանը, որ այն բառերը, որոնց մեջ նախալեզվյան b, d, g – ի դիմաց հայերենն ունի պ, տ, կ, պ-ի դիմաց՝ h, ւ, օ, օ-ի դիմաց ը, բնիկ հայերեն բառեր են, իսկ այն բառերը, որոնք ունեն բ, դ, գ; պ, փ; ա իրանական փոխառություններ են: Այսինքն՝ ինչ որ պարսկերենի հետ նույն է, «լիովին ծածկում է» պարսկերենին, ուրեմն փոխառնված է նրանից, իսկ ինչ որ տարբերվում է նրանից, բնիկ հայերեն է: «Հայերենը սկզբնական կոկորդայինները չչականների վերածելուն համաձայն պատկանում է արիական – սլավոլետտական լեզուների շրջանին: Մի կողմից նա համապատասխանում է արիական լեզուներին կոկորդայինների քմայնացման մեջ, բայց մյուս կողմից էլ կոկորդայինները նաև անփոփոխ է պահում, ինչպես սլավոլետտականը, և այդ պատճառով էլ ոչ արիականին է ստորադասված, ոչ էլ նրանից անջատված կարող է լինել: Դրա համար էլ նա չի կարող արիական համարվել, թեև նա, ինչպես և մյուսը՝ s-ն վերածում է h-ի և մի քանի բաղաձայնների ու բաղաձայնական խմբերի հետ /ինչպես՝ հայ. ՏX = իրան. XՏ / նմանապես կամ հավասարապես է վերաբերվում: Սիա թե ինչու պետք է զետեղել իրանականի ու սլավոլետտականի միջև, որպես ինքնուրույն ճյուղ /Unber die stellung ets., էջ. 28/: Այսպիսով, բազմավաստակ գիտնականը հաստատեց, որ հարյուրավոր բառեր, որոնք ընդհանուր են պարսկերենի և հայերենի համար, փոխառնվել են պարսկերենից, իսկ 299 հայերեն բառեր ուղղակի ծագել են հնդկվր. նախալեզվից: "Armenische grammatik" –ում այդ թիվը հասնում է 438-ի:

Հյուբշմանը հանգեց այն եզրակացության, որ հայերենը իրանական լեզուների ժառանգը չէ, այլ անկախ, ինքնուրույն լեզու է հնդեվրոպական լեզուների համակարգում, միջին դիրք է զբաղում իրանական և բալթիկ - սլավոնական լեզուների միջև և գտնվում է զարգացման այնպիսի աստիճանի վրա, ինչպես հունարենը, լատիներենը, սլավոներենը և այլ լեզուներ:

Հյուբշմանի դրույթներն է շարունակում ու զարգացնում ֆրանսիացի ականավոր հայագետ Ա. Մեյեն: Հիմք ընդունելով ոչ միայն բառապաշարային, այլև տարբեր լեզուների հնչյունական փոփոխությունների միջև եղած նմանությունները Մեյեն որոշում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի մեջ հայերենի գրաված դիրքը:

«Հայերենի բարբառային դիրքը» հողվածում լեզվաբանը գրում է. «Հնդիրանականի և մասնավորապես իրանյանի/, լետտո-սլավականի և հունականի մեջ է, որ հայերենի հնչյունական հիմ երևույթները գտնում են իրենց համապատասխանները, առանց թույլ տալու, սակայն, հայերենն առանձնապես սերտ կերպով այս 3 բարբառներից մեկի հետ միացնելու» /Position, MSL, IX, էջ 155/: Այսպիսով, Մեյեն հայերենը որպես անկախ լեզու, զետեղում է հնդիրանականի, լետտո – սլավականի և հունականի միջև:

Հյուբշմանի և Մեյեի տեսակետն է պաշտպանում նշանավոր հայագետ Հուլգեր Պեդերսենը: Լեզվաբանը կարծում է, որ լեզուների centum /արևմտյան/ և satəm /արևելյան/ տարբերությունը չի կարելի համարել հնդեվրոպական լեզուների բաժանման չափանիշ: Satəm լեզու հայերենը մոտ է թե centum լեզու հունարենին, թե satəm լեզու ավբաներենին, պարսկերենին:

Ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարան», «Հայոց լեզվի պատմություն», «Լիակատար քերականություն հայոց լեզվի» մեծաթիվ աշխատություններում, խմբավորելով իր նախորդների կատարած հետազոտությունների արդյունքները, զարգացրել է դրանք: Մեծ հայագետը հիմնականում շարունակել է դասական հնդեվրոպաբանության ավանդույթները ընդունելով իր ուսուցիչ Ա. Մեյեի հնդեվր. բարբառների փոխհարաբերության և հայերենի դիրքի մասին եզրահանգումները: Գ.Ղափանցյանը զարգացրել է հայերենի խառնածին բնույթի տեսակետը շեղվելով հնդեվրոպաբանության ավանդույթներից: Նրա լեզվագիտական հայացքների վրա մեծապես ազդել են Ն. Մառը և Ի. Բոդուն - դե - Կուրտենեն:

1930-40 թթ. Մառի «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանն է, որը խանգարում է համեմատական լեզվաբանության զարգացմանը: Դա տևում է մինչև 1950թ. «Պրավդա» թերթում լեզվաբանական բանավեճի հրապարակվելը: 1957թ. լույս է տեսնում էդ. Աղայանի «Պատմահամեմատական

մեթոդը լեզվաբանության մեջ» գրքույկը, որը կարևոր նշանակություն ունեցավ համեմատական լեզվաբանության զարգացման համար:

Համեմատական լեզվաբանությունը 60-80-ական թթ. հարստացավ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի բարձրաժեշք ուսումնասիրություններով:

Մեծահամբավ հայագետ ամփոփեց և ճշգրտեց հայերենի համեմատական ուսումնասիրությունների արդյունքները, ճշտեց հայերենի՝ Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հիմ լեզուների՝ իլիերենի, հիմ մակեդոներենի, թրակերենի, դակամիդիերենի, պելսագերենի, փոյուզերենի, խեթա - լուվական լեզուների հետ ունեցած փոխհարաբերության հարցը, ցույց տվեց հնդեվրոպական և խուռա - ուրարտական ընտանիքների ցեղակցական կապը, ուսումնասիրեց հայերենի և հնդեվրոպական հնաբանությունները և այլն:

Հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ զրաված դիրքը քննելու նպատակով Ջահուկյանը մամրակրկիտ ուսումնասիրության է ենթարկել հայերենի հնչյունական, քերականական և բառային զուգաբանությունները, բերել աղյուսակներ, ուր հաշվի են առնված Աճառյանի և Պոկոռնու բերած հավաստի ստուգաբանությունները<sup>2</sup>:

Հայերենին մոտ են արևմտյան խմբի լեզուները, թեպետ հեռու են կառուցվածքային տեսակետից:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե հնդեվրոպական քույր լեզուները՝ հայերենը և պարսկերենը, զարգացման ինչպիսի փուլեր են անցել:

Հաշվի առնելով, որ հայերենի զարգացման փուլերի /զրաբար V-XI, միջին հայերեն XII – XVI, նոր հայերեն XVII – XX/ մասին բազմիցս զրվել է ու խոսվել, հարկ ենք համարում առավել մանրամասնորեն ներկայացնել պարսկերենի զարգացման ընթացքը: Պարսից լեզվի պատմության մեջ ևս առանձնացվում են հին, միջին և նոր շրջաններ:

Սակայն հայ և պարսից լեզուների համապատասխան փուլերը չեն համընկնում: Ինչպես նշում է ակադ. Ջահուկյանը, հայերենի պատմությունը սկսվում է անմիջապես հնդեվրոպական միասնության շրջանից /մ.թ.ա. III հազարամյակ/, իրանական լեզուներինը՝ հնդիրանական միասնության տրոհումից հետո՝ մոտավորապես II հազարամյակի սկզբներին:

Իրանական ցեղերը, հնդկական ցեղերից բաժանվելով, հաստատվել են Միջին Ասիայում և մերձակա տարածքներում, ապա I հազարամյակի սկզբներին ներթափանցել արևմուտք և հարավ - արևմուտք այսօրվա Իրանի տարածքը:

«Իրանական ընդհանուր լեզվի մասնատման և իրանական ցեղերի տարաբնակման հետևանքով առաջանում են բարբառներ, որոնց բազայի վրա հետագայում ձևավորվում են իրանական լեզուները: Մ.թ.ա. I հազարամյակում, ինչպես ցույց են տալիս եղած տեքստերը և հին հեղինակների վկայությունները, իրանական ժողովուրդների լեզվական տարբերությունները դեռևս բարբառային բնույթ են ունեցել, և իրանական բոլոր բարբառներով խոսողները կարող էին իրար հասկանալ: Այլ կերպ ասած՝ իրանական լեզվախմբի զարգացման հին շրջանը ներկայացված է միայն բարբառային տարբերություններով, որոնք միջին շրջանում սկսվում են փոխվել լեզվական տարբերությունների: Դեռ այժմ էլ իրանական որոշ լեզուներով /օր. պարսկերենով և տաջիկերենով/ խոսողները կարող են իրար հասկանալ, թեև մեծ մասամբ տարբերությունները խորացել են մինչև անհասկանալիության աստիճան, օր. չեն կարող հասկանալ օսը և պարսիկը, օսը և քուրդը, քուրդը և աֆղանը և այլն»<sup>3</sup>:

Իրանական լեզուների գրավոր հուշարձանները մ.թ.ա. VI – IV դդ-ից են, այսինքն գրեթե 1 հազարամյակ ավելի առաջ, քան հայերենի գրավոր հուշարձանները: Թեպետ զրադաշտական կրոնի սուրբ գիրքը՝ ավեստան, գրի է առնվել միջին շրջանում, բայց ավելի հին է, քան հին պարսկերենը:

Հայերի և պարսիկների փոխհարաբերությունները սկսվել են մ.թ.ա. XI դ-ից, երբ առաջին անգամ Իրանում իրանական ցեղեր են երևացել: Հայերենի և պարսկերենի սերտ հարաբերությունները տևում են մինչև VII դ. արաբական արշավանքները, երբ Սասանյանների պետությունը ընկնում է արաբական տիրապետության տակ, և Ջրաղաշտի հայրենիքում իսլամը դառնում է պետական կրոն:

Այս շրջանում հայերենը շփվել է իրանական բարբառներ սկյութերենի, մեդերենի /մարերենի/, հին պարսկերենի, կիմերերենի /վերջինիս՝ իրան. բարբառ լինելու հարցը վիճելի է / հետ:

Նախապես լինելով փարսուա ցեղի լեզուն՝ հին պարսկերենը զարգանում է դառնալով արդեն ձևավորված պարսիկ ժողովրդի համաժողովրդական լեզուն: Հին պարսկերենը մեզ է հասել Աքեմենյան թագավորներ Դարեհի, Կյուրոսի, Քսերքսեսի, Արտաքսերքսեսի և այլոց թողած սեպագիր արձանագրությունների միջոցով: Բացի դրանից, իրանական լեզուների հարավարևմտյան ճյուղին պատկանող հին պարսկերենի մասին նյութեր կարելի է գտնել ակկադական, էլամական, ուրարտական, հունական աղբյուրներում /Գերչեվիչ, Սայրիոֆեր, Հինգ, Գրանտովսկի/: Պարսկերենի զարգացման հաջորդ փուլը միջին պարսկերենն է կամ պահլավերենը, որն ընդգրկում է մ.թ.ա. III դարից մինչև մ.թ. IX դարը: Այն բաժանվում է 2 ենթաշրջանի՝ Արշակունյան պահլավերեն և Սասանյան կամ Մոր պահլավերեն: Աճառյանը գրում է, որ Արշակունյան պահլավերենը, որը կոչվում է նաև հին կամ պարթևական պահլավերեն, պարսիկ Արշակունյան թագավորության լեզուն էր /մ.թ.ա. 256-մ.թ. 226/:

Արշակունյան թագավորները գրել են արամերեն կամ հունարեն և, ցավոք սրտի, իրենց արձանագրությունների մեջ չեն գործածել պահլավերենը: Սասանյան պահլավերենը Սասանյան թագավորության լեզուն էր /226-642/:

Միջին պարսկերենի հետ հայերենի շփումը շատ ավելի երկար է ընթացել, քան հին պարսկերենի հետ: Պետք է նկատի ունենալ նաև, որ Հայաստանում երկար ժամանակ տիրել են ծագումով պարսիկ թագավորներ: Նոր պարսկերենը սկսվում է X դարից և շարունակվում մինչև մեր օրերը: Նոր պարսկերենի զարգացմանը մեծապես նպաստել են Ռուդաքին, Ֆիրդուսին, Նասեր Խոսրովը, Օմար Խայամը:

Հին պարսկերենը, միջին պարսկերենը և Մոր պարսկերենը, լինելով նույն լեզվի զարգացման տարբեր փուլեր, հաճախ լեզվաբանության մեջ կոչվում են պարզապես պարսկերեն: Ավելացնենք, որ պարսկերենը, միանալով մյուս իրանական և հնդկական լեզուներին, կազմում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական կամ արիական ճյուղը:

Այսօր պարսկերենը Իրանի Իսլամական Հանրապետության պետական լեզուն է, խոսվում է նաև Տաջիկստանում, մասամբ՝ Ուզբեկստանում, Հնդկաստանում, Աֆղանստանում, Պակիստանում: Այժմ, հիմնվելով նշանավոր հնդեվ-

րոպաբանների կատարած հետազոտությունների արդյունքների վրա, փորձենք ներկայացնել այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ ունեն հայերենն ու պարսկերենը հնդեվրոպական մայր – լեզվի համեմատությամբ:

1. Հնդեվրոպական նախալեզուն ուներ շարժուն երաժշտական շեշտ, որ հայերենում դարձել է ուժգնություն և հաստատուն:

2. Նախալեզուն ուներ երկար ու կարճ ձայնավորներ: Հայերենում ձայնավորները քանակի տարբերություն չունեն ըստ երկարության ու կարճության, իսկ պարսկերենը ճանաչում է երկար ու կարճ a, e, o:

3. Հնդեվրոպական խուլ պայթականներին հայերենում համապատասխանում են շնչեղ խուլ պայթականները, ձայնեղ պայթականներին՝ խուլերը, շնչեղացած ձայնեղ պայթականներին՝ խուլերը, շնչեղացած ձայնեղ պայթականներին /bh, dh/ պարզ ձայնեղները: Օր.՝ հնիս. bhero «բերեն, կրեն» բառի դիմաց պարսկերենը ունի barami, հայերենը բերեն:

4. Հնիս. կոկորդային k և k' բաղաձայնների դիմաց հայերենը և պարսկերենը ունեն համապատասխանաբար շչական և կոկորդային բաղաձայններ: Օրինակ հնիս. k'mto' «հարյուր» բառից սանսկրիտն ունի cata'm, պրս. sad, հնիս. dek'm – ի դիմաց հայերենն ունի տասն, սանս.-ը dacan, պրս –ը dah:

5. Հնիս. a և o ձայնավորները նույնությամբ պահպանվում են հայերենում, իսկ արիականում 2-ն էլ դառնում են a: Օր.՝ հնիս. ago' «ածեն» բառի դիմաց պարսկերենն ունի azami ձևը:

6. Հայերենում և պարսկերենում հնդեվր. s-ը բառասկզբում դառնում է h, որոշ դեպքերում բառամիջում կարող է դառնալ ś: Օրինակ senos – հայերեն՝ «հին», սանս. sana, պարսկ. hanō: Հնդեվր. ni – si – zd - հայերեն նստին – պարսկ. ni – śasta: Հնդեվր. ters - /trs – հայ. թառամ/ թարշամ, սանսկ. trs na /ծարավ/:

7. Հնիս. l-ն հայերենում մնում է լ, պարսկ. r, օրինակ՝ hnr. leuk – հայերեն – լուս – սանսկ. roka', rocas – պրս. raucāh:

8. Բառամիջի ը /ə/ ձայնավորը պահպանվում է մի շարք լեզուներում, սակայն հայերենում և պարսկերենում ընկնում է: Օրինակ՝ հնիս. dhug-hster բառի դիմաց հայերենն ունի դուստը, պրս. duxtar:

9. r – ով սկսվող բառին հայերենում ավելանում է որևէ ծայնավորով նախահավելված, օր.՝

հնի. regos /մութ/ բառից ունենք եռել, սանս. raj as ,

հնի. rev - հ. առև , սանս. ravi

հնի. dn – mn - հ. ատամն, պրս. dantan

հնի. nōmn - հ. անուն , հպ. nāma

հնի. ēnwn - հ. ինն , պրս. nava

10. Հնդեվրոպականը ուներ բազմաթիվ բաղաձայնական խմբեր, որոնք հայերենը վերացրել է, և մեծ մասամբ ստացվել են բաց վանկեր: Հնդեվր.-ին հատուկ էին հնչյուններ, որոնք ըստ իրենց դիրքի կարող էին լինել ծայնավոր, բաղաձայն կամ էլ երկբարբառի II բաղադրիչ: Այս հարցում ևս հայերենը տարբերվում է:

11. Նոր պարսկերենը որոշակի փոփոխություններ է կրել միջին պարսկերենի համեմատ: Նշելի են բառասկզբի v > b, g փոխակերպումները, p, t, k խուլերի՝ նոր պարսկերենում b, d, g ծայնեղացումները, Շ-ի j, չ, ապա z դառնալը: Այդ պատճառով էլ հաճախ հայերենը, իբրև փոխառություն վերցնելով միևնույն բառը պարսկերենի զարգացման տարբեր փուլերում, դրանք պահել է որպես տարբեր բառեր՝ օր. վաճառ և քազառ: Ըստ էության դա նույն արմատն է:

Վերոբերյալ համեմատություններից կարելի է գալ հետևյալ եզրակացությանը. հայերենի և պարսկերենի հնչյունական համակարգերը զգալապես տարբերվում են հնդեվրոպական նախալեզվի հնչյունական համակարգից /նամանավանդ հայերենից/: Մեյեի խոսքերով ասած՝ հայերենը ներկայացնում է «հնդեվրոպականից բոլորովին տարբեր սիստեմ» /Էջ 35/:

Լեզուների ձևաբանությունը չափազանց դանդաղ է փոփոխությունների ենթարկվում: Հայերենը հարազատորեն պահպանել է հնդեվրոպական հոլովական իմաստները: Մեյեն իր «Դասական հայերենի համեմատական քերականության» մեջ գրում է. «Մինչև այսօր հոլովները հայերենում պահպանել են իրենց հնդեվրոպական հիմնական արժեքը՝ առանց էական փոփոխությունների, և այդ պահպանումը նրանով ավելի նշանակալից է, որ

բացի սլավոնականից ու բալթիականից, ոչ մի տեղ չենք գտնում նրանց համարժեքը» /էջ 71/:

Հնդեվր. հոգնակի **s** վերջավորությունը պահպանվել է գրաբարի հայցական հոլովում, իսկ ժամանակակից հայերենում գործածական չէ: Գրաբարյան հայցականի քարացած ձևեր են ժահսս, չորս, ասս:

Հնդեվր. մի շարք լեզուներ գործիական հոլովը կազմում են **m-ով**, իսկ հայերենն ու արիականը **b-ով** /հնխ. bh/: Հայերենում այն ձայնավորից հետո դառնում է վ :

Դիմ պարսկերենը ունեցել է **8** հոլով: Հոլովումը կատարվել է վերջավորությունների փոփոխմամբ ըստ հոլովվող բառի սեռի՝ իգական, արական, չեզոք: Արդեն միջին պարսկերենում ջնջվում է հոլովի քերականական կարգը, և անուն խոսքի մասերի շարահյուսական հարաբերությունները արտահայտվում են նախդիրներով, հետադրություններով, շարադասությամբ, իզաֆեթային կառուցվածքով և այլն:

Օրինակներ՝ շագերդն քեթաբ /աշակերտի գիրքը/ սեռ. հ.

Ման պգ դանեշգահ ամադամ /ես համալսարանից եկա:/ /բաց. հ./:

Ման դադ դանեշգահ քար միքոնամ /ես համալսարանում եմ աշխատում://Մ. հ./:

Ման քե դանեշգահ միռավամ /ես համալսարան եմ գնում/ /դեպի/:

Բառադարե ման փեժեշք աստ /Իմ եղբայրը բժիշկ է:/ /հատկացուցիչ, հատկացյալ/

Դոխթառե ոռաշանգ դանեշջու աստ /Գեղեցիկ աղջիկը ուսանողուհի է:/ /որոշիչ + որոշյալ/

Դավթար ոռ միգիրամ /Տետրը վերցնում եմ:/ /ուղիղ խնդիր, որոշյալ առում/

Սծականի բաղդատական աստիճանը պարսկերենը կազմում է **-tar** մասնիկով, որը հնխ. **terō** մասնիկից է ծագել:

Օրինակ՝ քուչաք – քուչաքթար /կոքոր - ավելի փոքր/

բոզորգ - բոզորգթար /մեծ - ավելի մեծ/ :

Հետաքրքիր է, որ հայերենը փոխ է առել վառթառ բառը՝ անկախ դրականի վառ ձևից: Ակներև է, որ հայերենում հոլովական համակարգի զարգացումը մինչև վերջ չի գնացել: Հոլովական ձևերի բազմազանությունը, միևնույն բառի՝

տարբեր հոլովումներին պատկանելը մատնանշում է, որ հայերենի հոլովական համակարգը դեռ չի հասել միօրինակության:

Թե հայերենը և թե՛ պարսկերենը չեն պահել երկակի թվի կարգը, որն ունեցել է հնդեվրոպական նախալեզուն:

Ի տարբերություն հոլովման՝ հնդեվրոպական խոնարհման բարդ համակարգը հայերենում վերածվել է պարզ ու կայուն համակարգի:

Հնդեվրոպական լեզուներում բայերի խոնարհման համակարգը ընդհանուր առմամբ նույնն է, թեև յուրաքանչյուր առանձին լեզու պատմական զարգացման ընթացքում ձեռք է բերել սեփական առանձնահատկություններ:

Հնդեվր. նախալեզվի բազմաթիվ բներից /թեմա/ հայերենը և պարսկերենը պահպանել են միայն 2 բուն՝ ներկայի և կատարյալի /aoriste/: Վերջավորությունների համակարգը հայերենում պարզվել է:

Հնդեվր. նախալեզվում ներկա և անցյալ ժամանակների գաղափարը արտահայտվում էր առաջնային և երկրորդային վերջավորությունների միջոցով: Հայերենում այդ բանը վերացել է, թեպետ այդ վերջավորությունների զգալի մասը ձևափոխված տեսքով պահպանվել է: Հայերենի անցյալ ժամանակների վերջավորությունները զգալի փոփոխություններ են կրել, այդ պատճառով էլ շատ ավելի դժվար է ճանաչել հնդեվրոպական հիմք – լեզվի երկրորդային, քան թե առաջնային վերջավորությունները:

Գրաբարը, ինչպես նաև հին պարսկերենը, անաղարտորեն պահպանել են հնդեվր. լեզվի նախահավելվածը կամ աճականը /augmentum/, օր.՝ ե - բեր, ա - barat:

Դիմավոր ձևերը պահպանել են դեմքի և թվի արտահայտման պարզությունը:

Կրավորականը առաջացել է հայերենի սեփական միջոցներով: Ներկայի և անցյալի կերպերի զանազանությունը աստիճանաբար վերանում է:

Բայերի արգելական հրամայականը հայերենը և պարսկերենը կազմում են նախալեզվից ժառանգած  $\overline{m\bar{e}}$  մասնիկով /կարդա - բեխան/: մի կարդա - մախան կամ նախան/:

Ժխտական ան ածանցին պարսկերենում համապատասխանում է na ածանցը /mard – namard/:

Պարսկերենում զարգացում են ապրում վերլուծական բայածները, ինչպես օրինակ անցյալ դերբայից կազմված բարդ կատարյալի ձևերը, կրավորական բայերի ձևերը և այլն: Այս փոփոխությունները, անշուշտ, ազդել են նաև քննարկվող լեզուների շարահյուսության վրա:

Դերանունների և հոդերի առատությամբ, բառերը նախադասության մեջ ճշտելու միջոցների բազմազանությամբ հայերենը չունի հավասարը իրենց ցեղակից լեզուների մեջ<sup>4</sup>:

### Ծանոթագրություններ

1. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 178:
2. Տե՛ս Գ. Ջահուկյան, Հ. Լ. պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 86-204:
3. Գ. Ջահուկյան, Հ. Լ. պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 490:
4. Տե՛ս Մեյե, «Հետազոտություն հայերենի համեմատական շարահյուսության», 1898, էջ 36: